ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 64-Ա

«06» փետրվարի 2025թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 13-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

06.02.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թ. փետրվարի 6 -ի
64 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետի

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ իրավաբանական բաժնին է վերապահված՝

1. Աշխատակազմում նախապատրաստվող իրավական փաստաթղթերի ձևակերպումը Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխանության իրականացումը.
2. Դատական ատյաններում Աշխատակազմի շահերի պաշտպանության իրականացումը.
3. Մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրման գործընթացի իրականացումը.
4. համայնքների ղեկավարների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացումը.
5. Իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը.
6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու, գործընթացին մասնակցությունը.
7. Աշխատակազմի կողմից իրականացվող վարչական վարույթի գործընթացին մասնակցությունը.
8. Գլխավոր քարտուղարի հրամանների և Մարզպետի որոշումների նախագծերի նախապատրաստման աշխատանքների իրականացումը.
9. Քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը մասնակցությունը.
10. Աշխատակազմի իրավասության շրջանակներում հակակոռուպցիոն միջոցառումների և Աշխատակազմի կողմից հակակոռուպցիոն ոլորտի

միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված համակարգման աշխատանքներին մասնակցությունը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի **կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման դեպքով պայմանավորված՝** անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը՝

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար փորձագետ ներգրավվում է 6 /վեց/ ամիս ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը՝

- Աշխատակազմում նախապատրաստվող իրավական փաստաթղթերի ձևակերպմանը Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- դատական ատյաններում Աշխատակազմի շահերի պաշտպանությունը,
- Աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների ղեկավարների կողմից իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությունը,
- շրջանակներում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու գործընթացին մասնակցությունը
- աշխատակազմի կողմից իրականացվող վարչական վարույթին մասնակցությունը,
- քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը մասնակցությունը,
- հակակոռուպցիոն միջոցառումների և Աշխատակազմի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված համակարգման աշխատանքներին մասնակցությունը:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

Փորձագետը սույն ծրագրով հանձնարարված աշխատանքների վերաբերյալ 3 ամիսը մեկ անգամ՝ միչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական

ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները՝

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները: Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6.Փորձագետին ներկայացվող պահանջները՝

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
- իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
- հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- հայերենի, ռուսերենի, անգլերենի բավարար իմացություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098
2025-02-06 16:45
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ